Տասնմեկերորդ հաղորդում

Աստղեր, արու զավակ, երախայրի, հունձք, հասպիս և այլ թանկագին քարեր

Գրվածքների ընթերցում. Հյտ 1:20, 2:1, 12:1-11, 14:1-5, 21:9-11, 18-21

I. Եկեղեցու դեգրադացիայի ժամանակ հավատարիմ հավատացյալները շողացող աստղեր են, որոնք կրում են Հիսուսի կենդանի վկայությունը՝ Հյտ 1:20.

Ա. Երկնային Քրիստոսը Հակոբից ելնող Աստղն է և առավոտյան աստղը՝ որպես պարգև հաղթող հավատացյալների համար՝ Թվց 24:17, Հյտ 2:28, 22:16-17:

Բ. Քրիստոսի հավատարիմ հետևորդները շողացող ու կենդանի աստղեր են՝ նրանք, ովքեր հետևում են Քրիստոսին՝ որպես շողացող ու կենդանի աստղի՝ Մտթ 2:2-12, Մք 5:2, Դնլ 12:3, Հյտ 1:20:

Գ. Կենդանի աստղերը հետևում են Քրիստոսի՝ որպես Աստծու տնտեսության կենտրոնականության և տիեզերականության երկնային, կենդանի, արդի և ակնթարթային տեսությանը՝ Գրծ 26:16-18:

Դ. Կենդանի աստղերը նրանք են, ովքեր օրհնում են Աստծուն և օրհնում են Աստծու մարդկանց. որքան Աստծու մարդկանց համար շատ ենք փառաբանում Տիրոջն ու հավատքով նրանց մասին բարի բաներ ասում, այնքան շատ ենք Աստծու օրհնության ներքո լինում. նրանք, ովքեր դրականորեն են խոսում եկեղեցու մասին, օրհնություն են ստանում, բայց նրանք, ովքեր բացասականորեն են խոսում, անեծքի տակ են հայտնվում՝ Թվց 24:9, Եփս 1:3, Սղմ 71:14, 103:1-5, 142:7, Ծնդ 12:2-3, Մտթ 12:34-37:

Ե. Կենդանի աստղերն անսում են Գրվածքների մարգարեական խոսքին «ինչպես մի ճրագի, որ շողում է խավար տեղում», որպեսզի Քրիստոսը՝ որպես առավոտյան աստղ, ծագի նրանց սրտերում՝ Բ Պտ 1:19, Հվի 6:63, Հյտ 2:28:

Զ. Կենդանի աստղերը վայելում են յոթնապատիկ ուժեղացված Հոգուն և լցվում Նրանով, ինչը նրանց ուժեղացված կերպով կենդանի և շողուն է դարձնում Աստծու կառույցի համար՝ 3:1, 4:5, 5:6:

Է. Կենդանի աստղերը եկեղեցիների պատգամաբերներն են՝ նրանք, ովքեր ականջ ունեն լսելու, թե Հոգին ինչ է ասում եկեղեցիներին. նրանք վայելում և փորձառաբար ապրում են պնևմատիկ Քրիստոսին՝ որպես Աստծու Պատգամաբերի և որպես Աստծուց եղող թարմ լուրի, որպեսզի Հիսուսի վկայության համար թարմ ու ներկայիս Քրիստոսին բաշխեն Աստծու ժողովրդի մեջ՝ 1:20-2:1, Մղք 2:7, 3:1-3:

Ը. Կենդանի աստղերը «սրտում եղող մեծ որոշումներ» և «սրտի մեծ փնտրումներ» ունեն. նրանք սիրում են Աստծուն և «իրենց ուղիներին» եղող «աստղերի» պես են, որոնք Աստծու հետ պատերազմում են Նրա

քշնամու ղեմ, որպեսզի լինեն «արևի պես, երբ այն իր զորությամբ ծագում է»՝ Դտվ 5:15-16, 20, 31, Դնլ 11:32, Մտթ 13:43, հմմտ Դնլ 7:25:

Թ. «Թափառական աստղերը» նրանք են, ովքեր ամուր կերպով ամրացված չեն երկնային հայտնության անփոփոխ ճշմարտությունների մեջ, այլ անկարգ կերպով թափառում են Աստծու ժողովրդի միջավայրում, որն աստղերի է նման. Աստծու վկայության համար եղող կայուն աստղեր լինելու համար մենք պետք է զգուշանանք յոթ տեսակի մարդկանցից, որոնք վնաս են պատճառում եկեղեցուն՝ Հդ 12-13, 19, հմմտ Ա Կրթ 3:17.

1. Ամմոնն ուրախանում էր, երբ Աստծու սրբարանը (որը երկրի վրա որպես Աստծու բնակատեղը խորանող Քրիստոսի նախատիպն էր՝ Հվի 1:14) պղծվեց, երբ բարի երկիրը (որը խորհրդապատկերում է Քրիստոսին՝ Իր ողջ հարստությամբ ու շնորհքով՝ տրված Աստծու մարդկանց՝ Կող 1:12) ամայացավ, և երբ Հուդայի տունը (որը խորհրդապատկերում է եկեղեցուն՝ Եբր 3:6) տարագրվեց. ամմոնացիները խորհրդապատկերում են նրանց, ովքեր ատում են Քրիստոսին, Աստծու շնորհքը և եկեղեցին՝ Եզկ 25:3:
2. Մովաբացիներն ուրախանում էին՝ տեսնելով, որ Հուդայի տունն այլևս առանձնացված չէր ազգերից. ուստի նրանք խորհրդապատկերում են նրանց, ովքեր ձգտում են եկեղեցին բերելու աշխարհի հետ ընկերակցության մեջ ու եկեղեցին դարձնելու նույնը, ինչ հեթանոս ազգերն են՝ խ. 8, Հյտ 2:12:
3. Եդովմացիները Եսավի՝ Հակոբի եղբոր հետնորդներն էին, ուստի և Իսրայելի որդիների եղբորորդիները (Ծնդ 36:1). Եդովմը խորհրդապատկերում է չվերածնված հին մարդուն, իսկ Իսրայելը՝ վերածնված նոր մարդուն (Հռմ 6:6, Գղտ 6:16, Փլպ 3:3). Եդովմը լի էր Իսրայելի հանդեպ ատելությամբ և մշտապես ոխակալություն ու վրիժառություն էր փնտրում՝ Եզկ 25:12:
4. Փղշտացիներն ապրում էին բարի երկրին շատ մոտ և նույնիսկ միախառնվում էին իսրայելացիների հետ. նրանք կրոնավոր մարդկանց բնական մարդու նախատիպն են. «եդովմացիները» և «փղշտացիները» ամենաշատ վնասն են պատճառում եկեղեցական կյանքին՝ խ. 15, Ա Կրթ 3:12, 16-17:
5. Տյուրոսը նրանց նախատիպն է, ովքեր աշխարհիկ հարստություն են փնտրում և Աստծու շահերի համար չեն հոգում՝ Եզկ 26:2, 28:12-15, հմմտ Գ Թգ 7:13-14:
6. Սիդոնը ծակող տատասկ ու ցավեցնող մացառ էր Իսրայելի տան համար. Տյուրոսն ու Սիդոնը որպես զույգ են դիտարկվում՝ ցույց տալով, որ եթե հավատացյալները սիրում են աշխարհն ու հոգում աշխարհային հարստության համար, դառնում են տատասկներ ու մացառներ, որոնք վնասում են եկեղեցական կյանքին՝ խոչընդոտե-

լով կյանքի ածին եկեղեցում՝ որպես Աստծու մշակվող հողում՝ Եզկ 28:21, 24, Մտթ 13:22, Ա Կրթ 3:9, հմմտ Հյտ 18:13:

7. Եգիպտոսը ազգ էր, որն ապավինում էր ոչ թե Աստծուն, այլ իր ռեսուրսներին. Եգիպտոսը ներկայացնում է մարդկանց, որոնք, Աստծուց անկախ լինելով, գործադրում են իրենց բնական իմաստությունը, որպեսզի զարգացնեն իրենց բնական ռեսուրսները՝ մատակարարմամբ հարուստ լինելու համար, ինչպես նաև ուրիշների համար կենսամատակարարման աղբյուր լինելու համար՝ Եզկ 29:2-9, հմմտ Ելց 4:1-9:

II. Արու զավակը խորհրդապատկերում է հաղթողներին, որոնք համագործակցում են Քրիստոսի հետ, որպեսզի պատերազմեն Նրա թշնամու դեմ և բերեն Աստծու թագավորությունը՝ Հյտ 12:1-11.

Ա. Արու զավակ դառնալու համար մեզ անհրաժեշտ է ամրապնդվել մեր ներքին մարդու մեջ, զորությամբ լցվել, որպեսզի փորձառաբար ապրենք Քրիստոսի հարստությունը, և ուժեղ լինել՝ հագնելով Աստծու սպառազինությունը սպանիչ խոսքն աղոթքաընթերցելու միջոցով՝ Եփս 3:16, 18, 6:10-11, 17-18, Հյտ 1:16, 19:13-15:

Բ. «Նրանք նրան հաղթեցին Գառան արյան շնորհիվ ու իրենց վկայության խոսքի շնորհիվ և իրենց շունչ-կյանքը չսիրեցին ընդհուպ մինչև մահ»՝12:11.

1. «Հիսուսի՝ Նրա Որդու արյունը մեզ մաքրում է ամեն մեղքից»՝ Ա Հվի 1:7:
2. Մեր վկայության խոսքը Քրիստոսի հաղթանակի աստվածային փաստերը մարդկանց հռչակելն ու ազդարարելն է՝ Ա Կրթ 12:3բ, Բ Կրթ 4:13:
3. Մեր շունչ-կյանքն ընդհուպ մինչև մահ չսիրելը նշանակում է, որ մենք ընտրում ենք Տիրոջն ամենից առավել սիրելը և որևէ առումով մեր «ես»-ով չապրելը՝ Կղս 1:17, 18բ:

Գ. Աբիգեան եկեղեցու նախատիպն է, որը մեկ է պատերազմող Քրիստոսի հետ, որպեսզի պատերազմի Աստծու թագավորության համար չարչարանքների մեջտեղում՝ Մտթ 12:3, Ա Թգ 25:42.

1. Աբիգեայի առաջին ամուսինը՝ Նաբաղը (որ նշանակում է «անմիտ»), ցույց է տալիս, թե որքան չար է մեր հին մարդը, որը թողնում է Քրիստոսին. Նաբաղն արհամարհում էր Դավթին, մերժում նրան և հակառակում նրան, երբ վերջինս զրկանքներ էր կրում՝ խխ. 10-11, 25, հմմտ Առկ 1:7, 13:20:
2. Երբ մեր ապականված բնությունը, որը թողնում, մերժում և արհամարհում է Քրիստոսին, ջախջախվում է, մենք դառնում ենք Քրիստոսի զույգը, որը հետևում է Նրան չարչարանքների մեջտեղում՝ պատերազմելով Աստծու թագավորության համար՝ Ա Թգ 25:36-42, Հյտ 1:9:

Դ. Գեդեոնն ու նրա երեք հարյուր մարդիկ հաղթողների միախառնված խումբ են խորհրդապատկերում, որոնք պատերազմում են Քրիստոսի հետ միասին՝ Նրա թագավորությունը բերելու համար՝ Դտվ 6:1-6, 1-35, 7:1-8, 19-25.

1. Նրանք պատրաստ էին ինչ-որ բան զոհաբերելու, որպեսզի օգտագործվեին Աստծու կողմից՝ Աստծու խոսքը կատարելու և Նրա տեսությունն իրականացնելու համար՝ խխ. 1-8, 8:4:
2. Նրանք վարեցին մարտն ու տքնեցին, սակայն թշնամուն հետապնդեց ու հունձքը քաղեց ողջ ժողովքը. դա նշանակում է, որ երբ մենք հաղթում ենք, ողջ Մարմինը կենդանանում է՝ 7:22-8:4, Կող 1:24, Սղմ 128:5:

III. Վաղ հաղթողներն Աստծու անդաստանում առաջինն են հասունանում, և նրանք հնձվում են մինչև հունձքը՝ որպես երախայրի Աստծու և Գառան համար՝ Հյտ 14:1-5.

Ա. Հափշտակությունը գլխավորապես ոչ թե մեր վայելքի համար է, այլ Աստծու վայելքի. մենք պետք է պատրաստվենք հափշտակվելու ոչ թե հանուն մեր հաճույքի, այլ հանուն Աստծու մտահղացման իրականացման՝ 12:5, 7-11,14:1, 4բ, 19:7:

Բ. Հափշտակության նշանակությունը վերցվելն է՝ Տիրոջ ներկայության մեջ լինելու. որպեսզի վերցվենք՝ Տիրոջ ներկայության մեջ լինելու, պետք է Նրա ներկայության մեջ լինենք այսօր և սովորենք Տիրոջ հետ մեր շփման մեջ մտերմիկ ու նվիրական փոխհարաբերություններ կառուցել՝ ունենալով սիրտ, որը սիրում ու գնահատում է Տիրոջը Նրա մտահղացման համար՝ Բ Կրթ 2:10, 4:6-7, Ա Հվի 1:3:

Գ. Հաղթողների հափշտակությունը թշնամուն հաղթելու և Աստծուն բավարարելու համար է.

1. Աստված կարիք ունի, որ մենք հափշտակվենք, վերցվենք Նրա մոտ ու Նրա գահի մոտ, որպեսզի պատերազմենք թշնամու դեմ՝ Հյտ 12:5, 7-11:
2. Տիրոջը հարկավոր է արու զավակը՝ Իր թշնամու դեմ մարտնչելու համար, բայց Նրան է՛լ ավելի շատ հարկավոր է երախայրին՝ Իր բավարարության և վայելքի համար՝ 14:1, 4, հմմտ Երգ 8:6, 13-14:
3. Երախայրին նրանք են, ովքեր Աստծու հունձքի մեջ ամենավաղն են հասունության հասնում՝ Կող 2:19, Եբր 5:14-6:1, Եփս 4:13, Փլպ 3:15, հմմտ Ղկս 21:36:
4. Երախայրին հափշտակվում է Աստծու տունը Սիոնում՝ որպես թարմ վայելք Աստծու համար՝ հանուն Նրա բավարարության՝ Ելց 23:19ա, Ղտց 23:10, հմմտ Հռմ 8:23:

Դ. Մեր հափշտակվելը կախված է այն բանից, թե արդյոք աստվածային կյանքում հասունության կհասնենք՝ Աստծու հետ քայլելով, այսինքն՝ Նրան ընդունելով որպես մեր կենտրոնի ու մեզ համար ամեն բանի և

ամեն բան Նրա հայտնության ու առաջնորդության համաձայն անելով՝ Ծնդ 5:22-24, Եբր 11:5-6:

Ե. Հունձքը, որը խորհրդապատկերում է հավատացյալների մեծամասնության, ավելի ուշ կհասնի, քան երախայրին. Քրիստոսը՝ որպես Հնձողը, հունձքը կհնձի մեծ նեղության ավարտին մոտ, երբ Նա կվերադառնա՝ սպիտակ ամպի վրա նստած՝ Հյտ 14:14-16:

IV. Հաղթող հավատացյալները խորհրդապատկերված են հասպիսով և այլ թանկագին քարերով՝ 21:9-11, 18-21.

Ա. Հասպիսը խորհրդապատկերում է Աստծու տեսքը. այն շողում է Աստծու փառքով՝ որպես Նոր Երուսաղեմի լույսով Աստծու արտահայտության համար՝ 4:3, 21:11, 18-19:

Բ. Այլ թանկագին քարերը խորհրդապատկերում են Քրիստոսի գեղեցկության հարստությունը տարբեր տեսանկյուններով՝ Աստծու հավիտենական բնակատեղի հիմքի համար՝ խխ. 19-21:

Գ. Շնորհիվ դատող Հոգու, այրող Հոգու և հոսող Հոգու, այսինքն՝ Տեր Հոգու, մենք փոխակերպվում ենք՝ փորձառաբար ապրելով Քրիստոսի՝ որպես հարության Աստծու հարստությունը, որը ձեռք ենք բերում չարչարանքների, սպառող ճնշումների և խաչի սպանիչ աշխատանքի արդյունքում՝ Եսյ 4:4, 11:2, Հվի 4:14բ, Բ Կրք 1:8-9:

Դ. Փոխակերպման գործընթացով անցնելով՝ մենք պարծենում ենք մեր տկարություններով և պարծենում ենք Քրիստոս Հիսուսով, որպեսզի Քրիստոսի զորությունը՝ որպես շնորհք, խորանի մեզ վրա՝ խ. 12, 11:30-33, 12:7-9, Հռմ 5:3, Ա Կրք 1:29-31, Փլպ 3:3:

Ե. Աճելով աստվածային կյանքում Քրիստոսի՝ որպես կենդանի քարի մեջ՝ մենք փոխակերպվում ենք թանկագին քարերի. փոխակերպման գործընթացի միջոցով Եռամեկ Աստված ներդրվում է մեր մեջ և մեզ հետ մեկ ամբողջական կառուցվածք է կազմում՝ Իր շնորհքի փառքի գովքի համար, որով Նա մեզ շնորհատրեց Սիրեցյալի մեջ, որպեսզի դառնանք Նոր Երուսաղեմը՝ որպես Աստվածաշնչի եզրափակումն ու բարի լուրը տիեզերքի համար՝ Ա Պտ 2:4, Ա Կրք 3:12ա, Եփս 1:6, Հյտ 21:18-21:

© 2026 Living Stream Ministry